Երևանի պետական համալսարանում գործող
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (ԲԿԳԿ)
իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին
հասցե՝ 0025, Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ
ԱՐՍԵՆ ԱՇՈՏԻ ԹԱՎԱԴՅԱՆԻ

ԺԲ.00.03 «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ Մանե Արամի Մարկոսյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությանը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է ինչպես հանքարդյունաբերության՝ երկրի տնտեսության համար ունեցած նշանակությամբ, այնպես էլ ընդերքի՝ պետության բացառիկ սեփականությունը հանդիսանալու սահմանադրական կարգավիճակով: Այս երկու հանգամանքների համակցումը պահանջում է այնպիսի իրավական կառուցակարգեր, որոնք միաժամանակ կապահովեն հանրային շահերի պաշտպանությունը, ընդերքի ողջամիտ ու անվտանգ օգտագործումը և մասնավոր շրջանառության մասնակիցների գույքային իրավունքների կանխատեսելի իրացումը:

Ընդերքօգտագործման ոլորտում ծագող հարաբերությունները միատարր չեն: Դրանց մի մասը կապված է թույլտվությունների տրամադրման, բնապահպանական և հարկային պարտավորությունների, վերահսկողության ու պատասխանատվության հետ և ունի հանրային-իրավական բնույթ, իսկ մյուս մասը վերաբերում է պայմանագրերին, գույքային իրավունքների ծագմանը և փոխանցմանը, գրավին, սնանկությանը, երկրաբանական տեղեկատվության ու ընդերքօգտագործման թափոնների իրավական կարգավիճակին: Հետևաբար, հանրային և մասնավոր իրավունքի կարգավորման միջոցների սահմանազատումն ու ողջամիտ համադրումը ոչ միայն տեսական, այլև անմիջական կիրառական նշանակություն ունեցող խնդիր է:

Գործող օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընդերքօգտագործման հարաբերությունների կարգավորման մեջ գերակշռում են վարչահիրավական մոտեցումները, մինչդեռ քաղաքացիական իրավունքի մի շարք ինստիտուտների կիրառման սահմանները հստակեցված չեն: Հետևաբար, հեղինակի ընտրած հետազոտական ուղղությունը համահունչ է թե՛ իրավական դաշտի կատարելագործման, թե՛ կայուն ներդրումային միջավայրի ձևավորման պահանջներին:

Թեմայի կարևորությունը ընդգծվում է նաև նրանով, որ հայկական իրավաբանական գրականության մեջ ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիահիրավական կարգավորումը մինչ այժմ համապարփակ գիտական հետազոտության առարկա չի դարձել: Ատենախոսությունում առաջին անգամ մեկ համակարգում դիտարկվել են ընդերքօգտագործման իրավունքի քաղաքացիահիրավական բնույթը, դրա ծագման, փոփոխման և դադարման հիմքերը, պայմանագրային կարգավորումը, ինչպես նաև ընդերքի, ընդերքի տեղամասի, երկրաբանական տեղեկատվության և ընդերքօգտագործման թափոնների իրավական ռեժիմները:

Հեղինակն իրականացրել է ծավալուն և ինքնուրույն հետազոտություն՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական և ճյուղային օրենսդրությունը, ներպետական դատական պրակտիկան, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի

ակտերը, ինչպես նաև օտարերկրյա օրենսդրությունն ու մասնագիտական գրականությունը: Աշխատանքում ներկայացված են տեսական ընդհանրացումներ և օրենսդրության կատարելագործմանն ուղղված բազմաթիվ կոնկրետ առաջարկներ:

Պարագրաֆ 1.1.-ում հեղինակը բացահայտում է ընդերքօգտագործման հարաբերությունների իրավական կարգավորման առարկան, մեթոդները և սկզբունքները, բնութագրում է այդ հարաբերությունների սուբյեկտներին ու օբյեկտներին, ինչպես նաև հիմնավորում քաղաքացիաիրավական կարգավորման նշանակությունը: Արժեքավոր է այն մոտեցումը, ըստ որի՝ ընդերքօգտագործման ոլորտի կարգավորումը պետք է կառուցվի ոչ թե մասնավոր և հանրային իրավունքի միջոցներից որևէ մեկի բացարձակ գերակայության, այլ դրանց գործառութային սահմանազատման և արդյունավետ համադրման վրա:

Նշված պարագրաֆում հեղինակը հիմնավորված կերպով ուշադրություն է դարձնում ընդերքօգտագործման՝ որպես գործարարական գործունեության առանձնահատուկ ոլորտի վրա և ցույց տալիս, որ ընդերքօգտագործողի ու պետության միջև ծագող մի շարք հարաբերություններ ունեն գույքային և ապրանքադրամական բնույթ: Կատարված վերլուծությունը հնարավորություն է տվել առանձնացնել քաղաքացիական իրավունքի նորմերով կարգավորման ենթակա հարաբերությունների շրջանակը՝ ներառելով սեփականության ու այլ գույքային իրավունքները, քաղաքացիական շրջանառությունը, պայմանագրային հարաբերությունները և քաղաքացիաիրավական պատասխանատվությունը:

Պարագրաֆ 1.2.-ում հանգամանորեն քննվում են ընդերքօգտագործման իրավունքի բնույթը, տեսակները, ինչպես նաև դրա ծագման, փոփոխման և դադարման հիմքերը: Հեղինակը ներկայացնում է տեսության մեջ ձևավորված իրային և պարտավորական մոտեցումները, վերլուծում ընդերքօգտագործման իրավունքի արտաքին և ներքին կողմերը և հանգում այն եզրակացության, որ այն պետք է դիտարկել որպես սահմանափակ իրային իրավունք: Այդ դիրքորոշման շարունակությամբ առաջարկվում է համապատասխան լրացում կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին մասում:

Ուշադրության է արժանի նաև ընդերքօգտագործման իրավունքի ծագման փաստակազմի ուսումնասիրությունը: Հեղինակը տարբերակում է իրավունքի ձեռքբերման սկզբնական և ածանցյալ եղանակները, անդրադառնում թույլտվության, պայմանագրի, լեռնահատկացման ակտի և պետական գրանցման փոխադարձ կապին, ինչպես նաև ընդգծում ընդերքօգտագործման իրավունքի ու դրա սահմանափակումների պետական գրանցման անհրաժեշտությունը: Այս առաջարկները կարող են նպաստել իրավունքի հրապարակայնության, երրորդ անձանց պաշտպանության և քաղաքացիական շրջանառության կայունության ապահովմանը:

Հեղինակը քննարկում է նաև ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման ընթացակարգը և ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածով նախատեսված հիմքերը: Աշխատանքում առաջարկվում է տարանջատել հանրային շահերի պաշտպանությանն առնչվող խախտումները, որոնց դեպքում հնարավոր է թույլտվության միակողմանի դադարեցում, և մասնավոր-իրավական պարտավորությունների խախտումները, որոնց նկատմամբ պետք է կիրառվեն պայմանագրի փոփոխման ու լուծման քաղաքացիաիրավական կառուցակարգերը: Հարցի այսպիսի առաջադրումը գիտական բանավեճի և իրավակիրառ պրակտիկայի զարգացման տեսանկյունից կարևոր է:

Պարագրաֆ 1.3.-ում ուսումնասիրվում են ընդերքօգտագործման հարաբերությունների պայմանագրային կարգավորման առանձնահատկությունները: Հեղինակը վերլուծում է ընդերքօգտագործման պայմանագրի իրավական բնույթը, այն բնութագրում է որպես պայմանագրերի մի քանի տեսակներ միավորող հավաքական հասկացություն և բացահայտում գործող օրենսդրության մասնատված կարգավորման թերությունները: Հիմնավորված է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում ընդերքօգտագործման պայմանագրերին նվիրված առանձին գլուխ նախատեսելու, ընդհանուր և հատուկ դրույթներ սահմանելու, ինչպես նաև պայմանագրերի էական պայմանները հստակեցնելու առաջարկը:

Պայմանագրային կարգավորման շրջանակում հեղինակը անդրադառնում է նաև օրինակելի պայմանագրերի դերին, կողմերի կամքի ինքնավարությանը, պայմանագրի պայմանների փոփոխման և դրա գործողության ժամկետի երկարաձգման հարցերին:

Աշխատանքում արտահայտված մոտեցումները նպատակ ունեն բարձրացնելու պայմանագրային կարգավորման կանխատեսելիությունը և ընդերքօգտագործման պայմանագրին հաղորդելու ինքնուրույն կարգավորիչ նշանակություն:

Պարագրաֆ 2.1.-ում հետազոտվում է ընդերքի քաղաքացիաիրավական կարգավիճակը: Հեղինակը տարբերակում է «ընդերք» և «ընդերքի տեղամաս» հասկացությունները՝ առաջինը բնութագրելով որպես քաղաքացիական շրջանառությունից հանված, իսկ երկրորդը՝ սահմանափակ շրջանառու օբյեկտ: Արժեքավոր է այն եզրահանգումը, որ ընդերքի տեղամասի՝ որպես անհատապես որոշվող անշարժ գույքի առանձնացումը իրավական ֆիկցիայի միջոցով հնարավորություն է տալիս պետության բացառիկ սեփականությունը հանդիսացող ընդերքի որոշակի մասը ներգրավել քաղաքացիական շրջանառության մեջ՝ առանց ընդերքի նկատմամբ պետական սեփականության իրավունքը վտանգելու:

Նշված վերլուծության հիման վրա հեղինակը առաջարկում է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 11-րդ հոդվածում հստակ ամրագրել, որ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով օգտագործման են տրամադրվում ոչ թե ընդերքն ամբողջությամբ, այլ ընդերքի կոնկրետ տեղամասերը: Պարագրաֆում քննվում է նաև օգտակար հանածոների՝ ընդերքից անջատվելու պահից ինքնուրույն քաղաքացիական իրավունքների օբյեկտ դառնալու հարցը, ինչպես նաև ներկայացվում են արդյունահանված հանածոների նկատմամբ պետության տնտեսական շահերի իրացման այլընտրանքային կառուցակարգեր:

Պարագրաֆ 2.2.-ում հանգամանորեն վերլուծվում է ընդերքօգտագործման իրավունքի քաղաքացիական շրջանառությունը: Հեղինակը բացահայտում է իրավունքի փոխանցման գործող կարգավորման բացերը և հիմնավորում, որ ընդերքօգտագործման իրավունքի լիարժեք ու նպատակային իրացումը գործնականում պահանջում է դրա հետ միասին անհրաժեշտ գույքային համալիրի՝ անշարժ գույքի, հողամասի նկատմամբ իրավունքների, սարքավորումների և այլ ակտիվների փոխանցում: Այս առաջարկը հատկապես կարևոր է գործարքի տնտեսական նպատակի իրագործելիության և ձեռք բերողի շահերի պաշտպանության տեսանկյունից:

Պարագրաֆում առանձին ուշադրություն է հատկացված ընդերքօգտագործման իրավունքի գրավին, հարկադիր օտարմանը և ընդերքօգտագործողի սնանկության հետևանքներին: Հեղինակը ճիշտ է արձանագրում, որ իրավունքի և դրա իրականացման համար անհրաժեշտ ակտիվների տարանջատված օտարումը կարող է էապես նվազեցնել դրանց արժեքը և խոչընդոտել հանքավայրի շարունակական շահագործմանը: Հետաքրքիր են նաև իրավաբանական անձի բաժնետոմսերի կամ բաժնեմասերի փոխանցման միջոցով ընդերքօգտագործման իրավունքի նկատմամբ վերահսկողության անուղղակի փոփոխությունը կարգավորելու վերաբերյալ առաջարկները:

Պարագրաֆ 2.3.-ում ուսումնասիրվում է երկրաբանական տեղեկատվության քաղաքացիաիրավական կարգավիճակը: Հեղինակը քննարկում է այդ տեղեկատվության ստեղծման, պահպանման, օգտագործման, տնօրինման և պետությանը փոխանցման փուլերը, համադրում պետական սեփականության, ընդերքօգտագործողի գույքային շահերի, հեղինակային իրավունքի և առևտրային գաղտնիքի պաշտպանության կառուցակարգերը: Աշխատանքում կարևոր հարց է բարձրացվում ընդերքօգտագործողի միջոցներով ձևավորված արժեքավոր տեղեկատվության հատուցելի փոխանցման և դրա տնտեսական արժեքի պահպանման վերաբերյալ:

Հեղինակի առաջարկները նպատակ ունեն հստակեցնել ընդերքօգտագործման իրավունքի գործողության ընթացքում երկրաբանական տեղեկատվության նկատմամբ ընդերքօգտագործողի իրավազորությունների ծավալը, տեղեկատվության առանձին տեսակների շրջանառության սահմանափակումները, ինչպես նաև պետությանը փոխանցվելուց հետո հեղինակների՝ ու իրավատերերի իրավունքների իրականացումը: Այս հարցերի համակարգային քննարկումը աշխատանքի գիտական և կիրառական կարևոր ձեռքբերումներից է:

Պարագրաֆ 2.4.-ում վերլուծվում է ընդերքօգտագործման թափոնների քաղաքացիաիրավական կարգավիճակը: Հեղինակը բացահայտում է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի, «Թափոնների մասին» օրենքի և ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերի միջև առկա անհամապատասխանությունները, ուսումնասիրում

համապատասխան դատական պրակտիկան և ցույց տալիս, որ սեփականության իրավունքի հարցի անորոշությունը կարող է հանգեցնել պետության ու ընդերքօգտագործողի միջև վեճերի:

Խնդրի լուծման նպատակով առաջարկվում է օրենսդրորեն ամրագրել ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ պետության սեփականության իրավունքը՝ միաժամանակ ընդերքօգտագործման իրավունքի գործողության ընթացքում ընդերքօգտագործողին վերապահելով դրանց տիրապետման ու օգտագործման իրավազորությունները: Թեև առաջարկվող կառուցակարգի առանձին տարրեր կարող են լրացուցիչ քննարկման կարիք ունենալ, խնդրի առաջադրումը և հակասական կարգավորումների համակարգային վերլուծությունն ինքնին ունեն կարևոր գործնական նշանակություն:

Ատենախոսության ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հեղինակը կատարել է ավարտուն գիտական աշխատանք՝ կիրառելով համագիտական և մասնագիտական հետազոտական մեթոդներ, համադրելով տեսական աղբյուրները, նորմատիվ իրավական ակտերը և իրավակիրառ պրակտիկան: Աշխատանքի գիտական նորույթն արտահայտվում է ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական բաղադրիչի համակարգային բացահայտման, մի շարք օբյեկտների իրավական ռեժիմների վերաիմաստավորման և օրենսդրական կոնկրետ փոփոխությունների առաջարկման մեջ:

Հետազոտության հիմնական դրույթներն ամփոփված են հեղինակի թվով ութ գիտական հոդվածներում:

Այնուամենայնիվ, կարծում եմ, ատենախոսության մեջ առկա են առանձին վիճելի եզրահանգումներ, որոնց վերաբերյալ ցանկանում եմ ներկայացնել հետևյալ դիտողությունները:

1. Աշխատանքի առաջին գլխի 1.2-րդ պարագրաֆում հեղինակը հիմնավորում է, որ ընդերքօգտագործման իրավունքն ունի սահմանափակ իրային իրավունքի բնույթ և դրան բնորոշ հիմնական հատկանիշները: Ներկայացված հայեցակարգը հետաքրքիր է

և կարող է իրավական պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ ստեղծել, սակայն դրա հիմնավորումը, մեր կարծիքով, կարիք ունի որոշակի խորացման: Մասնավորապես, իրավունքի անբաժանելի լինելն ու միայն մեկ իրավաբանական անձի պատկանելու հնարավորությունը ինքնին դեռևս չեն ապացուցում դրա բացարձակ բնույթը, իսկ շրջանառունակությունն ու տնտեսական արժեքը բնորոշ են նաև մի շարք պարտավորական իրավունքների: Նույն կերպ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ընդերքօգտագործման իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «գույք» դիտարկելը պարտադիր կերպով չի կանխորոշում դրա ներպետական մասնավոր-իրավական դասակարգումը, առավել ևս, որ գույք տերմինը Կոնվենցիոն և քաղաքացիաիրավական իմաստով կրում են տարբեր ծանրաբեռնվածություններ: Ուստի, աշխատանքը կշահեր, եթե իրային իրավունքներին վերաբերող հարցը ներկայացվեր ավելի խորը տեսական մակարդակով:

2. Աշխատանքի 1.3-րդ պարագրաֆում հեղինակը առաջարկում է ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշմամբ հաստատված ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերի բոլոր պայմանները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 4-րդ մասի և 438-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա մեկնաբանել որպես իմպերատիվ նորմեր, ոչ թե էական պայմաններ: Այս դիրքորոշումը, մեր գնահատմամբ, լրացուցիչ հիմնավորման կարիք ունի: Նախ, հեղինակը գնահատում է օրինակելի ձևերը որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 443-րդ հոդվածով նախատեսված օրինակելի պայմաններ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 443-րդ հոդվածը «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 24.05.2023թ.-ի թիվ ՀՕ-184-Ն օրենքից հետո այլևս ունի այլ բովանդակություն, և օգտագործում է «ընդհանուր պայմաններ», ոչ՝ «օրինակելի պայմաններ» տերմինը: Սա զուտ տերմինաբանական փոփոխություն չէ. առկա է նաև բովանդակային փոփոխություն: Երկրորդ, Քաղաքացիական օրենսգրքի 443-րդ հոդվածը ընդհանուր պայմանների համար նախատեսում է առանձին ռեժիմ՝ դրանց վերաբերյալ կամ պետք է առկա լինի հղում, կամ դրանք կիրառվում են գործարար

շրջանառության սովորույթների ուժով: Երրորդ, մինչև որևէ կարգավորումը էական պայման և իմպերատիվ նորմ դիտելը, ցանկալի կլիներ տալ դրանց թեկուզ հակիրճ, սակայն հստակ վերլուծություն:

3. Աշխատանքի երկրորդ գլխի 2.3-րդ պարագրաֆում հեղինակը երկրաբանական հաշվետվությունները, ընդերքի երկրաբանական կառուցվածքի վերաբերյալ տվյալները և օգտակար հանածոների կանխատեսվող պաշարների վերաբերյալ տվյալները դասում է հեղինակային իրավունքի օբյեկտների շարքին: Մինչդեռ հեղինակային իրավունքի պաշտպանությունը պայմանավորված է ստեղծագործության արտահայտման ձևի ինքնատիպությամբ և չի տարածվում գաղափարների, սկզբունքների, մեթոդների, ընթացակարգերի, տեսակետների վրա՝ որպես այդպիսիք: Հետևաբար, երկրաբանական տվյալները կամ պաշարների վերաբերյալ փաստական տեղեկությունը չեն կարող ինքնաբերաբար համարվել հեղինակային իրավունքի օբյեկտ, թեև դրանց հիման վրա կազմված քարտեզը, հաշվետվությունը կամ տվյալների բազան կարող է պաշտպանվել իր ինքնատիպ ընտրության, համակարգման կամ արտահայտման ձևի մասով:

4. Աշխատանքը կշահեր, եթե հեղինակն անդրադառնար ՀՀ-ում ընդերքօգտագործման և հողօգտագործման առանձնացման հիմնախնդրին: Սա ընդերքի ոլորտում լրջագույն խնդիրներից մեկն է, երբ ընդերքօգտագործողը ստանում է Կառավարությունից ընդերքի օգտագործման թույլտվություն, սակայն չի կարողանում ձեռք բերել հողի օգտագործման թույլտվություն, և առկա չեն գործուն մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտային ստանալ այդ հնարավորությունը: Բացի դրանից, հստակ կարգավորված չէ՝ ինչ իրավունք է ստանում ընդերքօգտագործողը, ինչ կատեգորիայի հողեր կարող է օգտագործել, ով է փոփոխելու կատեգորիան և այլն:

Վերը նշված դիտողությունները կրում են մեթոդաբանական և բանավիճային բնույթ, հետապնդում են առանձին դրույթների լրացուցիչ հիմնավորման ու հստակեցման նպատակ և չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժանիքներն ու ընդհանուր դրական գնահատականը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Մանե Արամի Մարկոսյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 08.08.1997թ. թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.03 «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝ Ա.Ա. Թավադյան

Դոցենտ, ի.գ.թ.

10.08.2026թ.

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Արսեն Աշոտի Թավադյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԴԵԿԱՆԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. Պետրոսյան